



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34
W-36



Հրատարակուիլն «Աս. Լիսիցեան եւ Ընկ.»


07 FEB 2010

ՊՐՕՖ. Թ. ԱՆԻՆԻՍՍ

ԻՐԱԻՈՒՆՔԻ

ԾԱԳՈՒԽՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԸ

(7)



ԻՐԱՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Սկսել է մի շարք թարգմանական զեղարևատա-
կան մեծ գրածքների հրատարակութիւն

«ՕՏԱՐԱԶԳԻ ԶԵՂԻՆԱԿՆԵՐ»

ընդհանուր վերնագրի սակ

Թարգմանութեանը մասնակցելու են առաջնարգ
ոյժեր:

ԱՌԱՋԻՆ ՎԵՅՅԱՏՈՐԵԱԿԻ

մէջ մտնում են հետևեալ աշխատութիւններ:

1. Էրկման-Շասրիան—«ՄԻ ԳԻԻՂԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»,
վէպ 18-րդ դարի վերջի ֆրանսիական կեանքից:
2. Վոյնիչ—«ԲՈՌ», վէպ երեսնական թւականների ի-
տալական կեանքից:
3. Վ. Ֆոն Գլեյնց—«ԲԻԻՏՆԵՐ ԳԻԻՂԱՅԻՆ», վէպ ժա-
մանակակից գերմանական կեանքից:
4. Էմիլ Զօլա—«ԺԵՐՄԻՆԱԼ կամ ԱԾԽԱՅԱՏՆԵՐ», վէպ
ժամանակակից ֆրանսիական կեանքից:
5. Հաուպսման—«ԴՐԱՄԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ» (Կառա-
պան Հենշել, Զուլհակներ, Կրամպտոն բարեկամը
և այլն):
6. Կ. Է. Ֆրանցօզ.—«ՏԱՐԱՍ ԲԱՐԱԲՕԼԱ»,—վէպ երես-
նական թւականների պօղօլեան առևտրիների
կեանքից:

Ամբողջ հրատարակութիւնը կունենայ 2200—2400
մեծադիր երես և կրսկուի 1905 հոկտ. ու կը
վերջանայ 1906 թ. մայիսին:

34
Ա-366

ՊՐՕՅ. Թ. ԱՆԵԼԻՍ

5 FEB 20

340
1764-ԱԽ

9241

ԻՐԱԽՈՒՆՔԻ

ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1003
1455



<p>Հրատարակութիւն «ՕՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» ԸՆԿԵՐՈՒԹԱՆ</p>

4 FEB 2013

32.871

135404594

ՅԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԱՊՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Дозволено цензурою. Тифлисть, 12 июля 1905 г.

... միայն ինչպէս Վ. Կոմարովի ծանօթագրութեան
... իրաւունքով իր լեզուով թարգմանելու իր
... մասին միայն իր լեզուով թարգմանելու
... իր լեզուով թարգմանելու իր լեզուով թարգմանելու
... իր լեզուով թարգմանելու իր լեզուով թարգմանելու

I.

Ժամանակակից գիտութեան կարևորագոյն
ու բազմաբնուէի գիտութիւն մէկն էլ այն միտքն է,
թէ տիեզերական իւրաքանչիւր կազմաւածք կամ
մարմին ստեղծուած չէ եղել իր ներկայ դրու-
թեամբ, այլ հետզհետէ զարգացել է, անցնելով
մէկ ձևից միւսին, ու թէ այժմ նա ինքը իր մէջ
պարունակում է իր աստիճանական զարգացման
ամբողջ պատմութիւնը, այսինքն իւրաքանչիւր
կազմաւածքի ներկայ պատկերից կարելի է ընդա-
նուր գծերով գուշակել, թէ ինչ փոփոխութիւն-
ների է ենթարկուել նա իր պատմական գոյու-
թեան ընթացքում: Աստղալից երկնքի ներկայ
կազմութիւնից կարելի է զազափար կազմել այն
մասին, թէ ինչպէս է նա հետզհետէ առաջ եկել:
Երկրագնդի մակերևոյթը կազմող շերտերը ցոյց
են տալիս մեզ, թէ ինչ անցեալ է ունեցել մեր
հարազատ մոլորակը: Օրգանագիտութիւնը (մոր-
ֆոլոգիան) մեզ սովորցնում է, թէ ինչպէս կա-
րելի է որևէ բոյսի կամ անասնի օրգանական կազ-
մութիւնից իմանալ, թէ ինչ ձևակերպութիւննե-
րի է ենթարկուել նա, մինչև որ հասել է ներկայ

կատարելագործւած գիտութեան: Մարդկային ուղեղի կազմւածքը ուսումնասիրելով, հնարաւոր է որոշ չափի գաղափար ստանալ այն մասին, թէ ինչպէս է հազարամեակների ընթացքում գոյացել մարդու այժմեան նրբակազմ ուղեղը: Լեզւագէտը, ուսումնասիրելով մի ազգի ներկայ լեզուն, ըմբռնում է, թէ այդ ազգը զարգացման ինչ աստիճաններ է անցել: Այդպէս էլ մարդկային ցեղի ներկայ պատկերն ու մարդկային իւրաքանչիւր կազմակերպութեան (ազգի, պետութեան, ընտանիքի և այլն) այժմեան դրութիւնը կարող է գաղափար տալ մեզ այն մասին, թէ ինչ պատմական ընթացք է ունեցել ամբողջ մարդկային ցեղը կամ թէ նրա այս ու այն կազմակերպւած ճիւղը:

Ահա այս աստիճանական զարգացման գաղափարը զօրեղ կերպով նպաստել է բնագիտական հարցերի պարզաբանելուն: Սակայն նոյն սկզբունքը աւելի ևս արդիւնաւէտ հանդիսացաւ պատմական գիտութիւնների համար: Այդ նոյն սկզբունքով են դեկավարուում ժամանակակից ազգաբանութիւնը, ընկերաբանութիւնը (սօցիօլօգիան), համեմատական իրաւագիտութիւնը, մարդկային ցեղի նախնական պատմութիւնը, գեղարւեստի ծագման պատմութիւնը և շատ ուրիշ գիտութիւններ: Միայն այդ եղանակով է հնարաւոր՝ լոյս սփռել և մեզ զբաղեցնող նիւթի, այսինքն իրաւունքի զարգացման պատմութեան վրա, որովհետև աւան-

դութիւնը շատ քիչ նիւթ է պահել անցած ժամանակների մասին: Իսկ ազգերի ու մարդկութեան ներկայ կազմակերպութեան ուսումնասիրութիւնը շատ բան կարող է պարզել՝ իրաւունքին կամ օրէնքին վերաբերեալ:

Այդպէս վստահ լինելով հետազօտութեան նոր եղանակի վրա, մենք նախ և առաջ մի կողմ կը դնենք այն եզրակացութիւնները, որ արել է իրաւագիտութիւնը, հիմնւելով լոկ վերացական դատողութիւնների կամ նախապէս անապացոյց կերպով ընդունած գաղափարների վրա: Լոկ մտազննական-դատողական ուսումնասիրութիւնը մեծ արժէք չունի, քանի որ նա հիմնւած չէ անհրժեքի փաստերի վրա: Մենք պիտի ընթանանք փորձնական հետազօտութեան վստահելի ճանապարհով, որ հարթել է մեզ համար նորագոյն, համեմատական իրաւագիտութիւնը, օգտւելով ազգազրական նիւթերից: Իրաւունքը ուրիշ բան չէ, բայց եթէ հասարակական կազմութիւնից բխած և նրան համապատասխանող մի կանօնաւորութիւն. հասարակական կեանքին ուղղութիւն տւող իրաւունքը (այսինքն օրէնքը) չէ, այլ նա ինքը հէնց հասարակական կեանքի ծնունդն է, նրա առաջացրած արդիւնքն է միայն: Ուստի և միայն հասարակական կազմակերպութիւնը ուսումնասիրելով, կամ ուրիշ խօսքով ասած՝ ազգազրական առատ նիւթերը հետազօտելով, մենք կարող կլինենք կշիռ ունեցող եզրակացութիւններ անել՝ ի-

բաւունքի ծագման ու զարգացման մասին: Սաղա-
կայն նախ և առաջ մենք պիտի մի համառօտ գաղա-
փար տանք այն մասին, թէ ինչ ենք հասկանում
մենք՝ իրաւունք ասելով:

Իրաւունք կամ օրէնք ասելով, մենք հաս-
կանում ենք ոչ թէ վերացական սկզբունքների ու
կենսավարական կանօնների գրաւոր շարադրու-
թիւնը, որպէս ընդունում են տեսականօրէն մտա-
ծողներից ոմանք, այլ ընկերական վարքութեան
ամբողջ շրջանը, որքան նա նշանակութիւն է ու-
նեցել հասարակական կազմակերպութեան տեսա-
կէտից: Նախնական ժամանակներում, այսինքն
մարդկային կեանքի ամենացածր աստիճանների
վրա, իրաւունքը և բարքովարքը (սովորութիւ-
նը, ադաթը) իրարից ամենևին չեն տարբերում:
միայն ժամանակի ընթացքում նրանք սկսում են
հեռոցհեռէ միմեանցից զանազանել և վերջապէս
հասնում են այնպիսի դրութեան, որ մինչև ան-
գամ իրար հակառակ են լինում: Ի՞նչ ենք տես-
նում օրինակ, նախնական, արիւնսակցական կա-
պերով կապած, համայնքի մէջ, որի նպատակը
միայն ընդհանրութեան ապահովութիւնն է, իսկ
անհատական շահը և հետևապէս անհատական ի-
րաւունքը ինքն ըստ ինքեան ոչ մի նշանակութիւն
չունի: Ահա այդ շրջանում, աւանդութեան ու
կրօնի անունով սրբագործւած բարքովարքը միա-
ժամանակ պարունակում է իր մէջ համայնքին
պատկանող անդամի բոլոր պարտաւորութիւննե-

րը. ինչ որ ընդդէմ է բարքովարքին (սովորու-
թեան), նոյնը համարւում է և իրաւունքին հա-
կառակ: Ահա այդպիսի պարզ և ընդհանուր մտքով
առած, իրաւունքն էլ ուրիշ մի բան չէ, բայց եթէ
հասարակական յարաբերութիւնների հանրամատ-
չելի արտայայտութիւնը. իրաւունքը ցոյց է տա-
լիս, թի ինչ կապերով են կապւում իրար հետ
մէկ ցեղին պատկանող առանձին անհատները կամ
ընտանիքները, որպէսզի թէ ի ներքուստ ապա-
հովեն իրանց կեանքը և թէ կարողանան դիմա-
դրել արտաքին թշնամիներին: Սյդ է պատճառը,
որ իրաւունքը ամբողջովին պայմանաւորւած է
հասարակական կազմութեամբ, այսինքն կախւած
նրա ձևից. այստեղ ենք անհամար տեսնում մար-
դու նախնական, գուտ բնական պատկերը, որը յե-
տագայում զանազան գունաւորութիւնների է են-
թարկւում:

Եթէ ընդունենք, որ իրաւունքը հասարակա-
կան յարաբերութիւնների արտայայտութիւնն է,
ինքնատիքեան հասկանալի կլինի, որ ամեն տեղ,
բոլոր ժողովուրդների կեանքում, նոյն իսկ զար-
գացման ամենացածր աստիճանների վրա, իրա-
ւունքը գոյութիւն ունի, թէև, իհարկէ, ոչ ան-
պատճառ գրաւոր, մշակւած օրէնսդրութեան ձև-
ով, այլ որպէս սովորութիւն, աւանդութիւն և
այլն, մարմնացած՝ որոշ աշխարհայացքի կամ
հիմնարկութիւնների մէջ: Զանազան օրէնքների
բովանդակութիւնը կախւած է նախ և առաջ հա-

տարակական կազմութեան ձևից, ոչ թէ բացառապէս մտաւոր զարգացման աստիճանից: Հակառակ դէպքում, հնդկացիք, չինացիք, պարսիկները և այլ հաւասար քաղաքակրթութիւն ունեցող ազգերը և միատեսակ օրէնքներ կունենային. իսկ այդ բանը, որպէս հետազօտութիւնը ցոյց է տալիս, տեղի չէ ունենում: Իւրաքանչիւր կազմակերպութիւն իրան համապատասխան իրաւունք է ունենում: Եթէ մենք թոյլ չը տանք մէկ շէրքէզին իր ~~թշնամուց~~ արեան վրէժ առնել, նա կը պատասխանէ մեզ, թէ մենք չափազանց անարդար ենք վարւում իր հետ: Իսկ եթէ ժամանակակից եւրոպացուն յորդորենք արեան վրէժ առնել, նա կը հակառակէ մեզ ասելով, թէ այդ բանը մեծ անարդարութիւն կլինէր իւր կողմից: Ձեզ մնացած մի ցեղի նահապետը ծախում է իւր աղջկան մի տղամարդի, որին աղջիկը բոլորորին չէ սիրում. անգութ հայրը այդ քայլը անում է, ի նկատի ունենալով համայնքի ընդհանուր շահը, ուստի և ոչ մի յանդիմանութիւն չէ ստանում ցեղակիցների կողմից. և եթէ աղջիկը հակառակ է հօր կամքին, նա մեծ յանցանք գործած կլինի: Իսկ լուսաւոր եւրոպացին այդպիսի հօրը բռնակալ կհամարէր: Եթէ մի մահմեդական թողնում է իր հայրերի հաւատը և քրիստոնեայ է դառնում, նա համարւում է մահւան պատժին արժանի մի ոճրագործ. իսկ քրիստոնեայ եւրոպացին, իրաւունքի հիման վրա, կատարեալ ազատութիւն է պա-

հանջում կրօնական հարցերի ասպարիզում: Միջին դարերի գերմանացին համոզւած էր, որ եթէ այս ու այն աղանդաւորին կամ հերետիկոսին խարոյկի վրա այրում են, կամ ողջ-ողջ խոռովում են, սրանով արդար դատաստան են անում, իսկ մեր դարի գերմանացին լսել անգամ չէ ուզում այդպիսի սոսկալի պատիժների մասին: Սոմալիները մէջ աւագակը պատւաւոր մարդ է համարւում, մարդասպանը հերոս է կոչւում: Քիւրդը միայն այն ժամանակ է իսկական մարդու անուն ստանում, երբ գոնէ մի հատիկ մարդ է սպանում, նա մինչև անգամ իրաւունք չունի ամուսնանալու, քանի դեռ ոչ մի մարդ չէ սպանել: Իսկ բոլոր քաղաքակիրթ երկրներում աւագակն ու մարդասպանը անպայման չարագործներ են համարւում: Չինաստանում ճիպոտներով ծեծւում է այն բժիշկը, որը ընդունւած կանօններին ուշադրութիւն չը դարձնելով մի ինքնորոյն դեղատոմս է գրում, իսկ մեր իրաւական զիտակցութեանը հազիւ թէ համապատասխանէր այդ օրէնքը: Մանուի հնդկական իրաւունքի համեմատ՝ եթէ մէկ հասարակ արհեստաւոր յիշեցնէ մէկ հոգեւորակազնին նրա պարտաւորութիւնը, պիտի իւղը հալեն ու տաք-տաք ածեն արհեստաւորի բերանն ու ականջները: Հին եգիպտացին բոլորովին հականալի էր գտնում, որ եթէ մի մարդ, թէկուզ պատահմամբ, սպիտակ ճակատ ունեցող մի սև կով սպանէ (սև կովը — Իբիսը — եգիպտացոց աստուածն

էր), պիտի անպայման մահւան պատժի ենթարկուի: Այդ բանը, իհարկէ, մեր աչքին կատարեալ խելացնորութիւն է երևում: Ուրեմն իրաւական հայեացքները փոփոխուում են, տեղի ու հանգամանքների համեմատ, և այն բանը, որ մի տեղ ծանր յանցանք է համարւում, մի ուրիշ տեղ բոլորովին իրաւացի են գտնում: Միայն թէ, ի հարկէ, քաղաքակրթութիւնը ծածկում է ընդհանուր մարդկային կեանքը միատեսակ վեռնիճով (լաքով) և անկասկած չի դարձնում ցեղական տարբերութիւնները, զարգացնում է մարդասիրական բարոյական զգացմունքը և այդպիսով որոշ նմանութիւն է մտցնում զանազան ցեղերի օրինական կարգերի մէջ: Յիշելով այն բարբարոսական ժամանակները, երբ արեան վրէժը ամեն տեղ սովորական երևոյթ էր, կարելի է ասել, որ մարդկային անգթութեան աստիճանը հետզհետէ իջել է, այնպէս որ մեր ժամանակի մարդասիրական վերաբերմունքը դէպի յանցաւորները՝ երբեմն նոյն իսկ չափազանցութեան է հասնում:

Այդպէս ուրեմն, անհերքելի փաստերի վրա հիմնւած ուսումնասիրութիւնը իսկապէս ազացուցանում է, որ իրաւունքը միշտ և ամեն տեղ հասարակական յարաբերութիւնների անմիջական արտացոլումն է: Սակայն հէնց մի թուուցիկ հոգեբանական վերլուծութիւնն էլ բաւական է՝ այդ ճշմարտութեան մէջ համոզելու համար: Տակաւին Արիստոտելը, հին Յունաստանի փիլիսո-

փայ-հասարակագէտը, պնդում էր, թէ մարդը մի հասարակական կենդանի է, և մեր ժամանակակից ազգագիտութիւնը ու ժողովուրդների հոգեբանութիւնը բազմաթիւ փաստերով հաստատում են այդ միտքը: Լեզուն, կրօնը, դիցաբանութիւնը, իրաւաբանութիւնը, բարքովարքը, գեղարւեստը և այլն ոչ թէ այս ու այն անհատի հնարովի զիւտերն են, այլ հասարակական-հոգեբանական անխուսափելի երևոյթներ են, ուրիշ խօսքով ասած՝ անհատի ու հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող օրգանական փոխադարձ ազդեցութեան բնական արդիւնքն են: Թէ ինչ կը ներկայացնէր առանձնական, կղզիացած մարդը ինքն ըստ ինքեան, այսինքն ինչ բնաւորութիւն ու յատկութիւն կունենար նա՝ եթէ ի բնէ հասարակութիւնից կտրւած լինէր, այդ մասին լուրջ գիտութիւնը ոչինչ չը գիտէ: Մարդկային զարգացման սրշալոյսը ծածկւած է թանձր ու մառախլապատ ամպերով, որոնց մէջ ամենասուր հայեացքն անգամ չէ կարող թափանցել՝ նախամարդի կերպարանքը դիտելու համար: Սակայն վաղուց արդէն ժամանակ է, որ մենք դուրս վունդենք վերացական երեւակայութեան այդ չարագուշակ պատկերը՝ անհերքելի փորձի ու դրական հետազօտութեան ասպարիզից: Մեզ համար աւելի կարևորութիւն ունի այն հարցը, թէ ինչ փոխադարձ ազդեցութիւն կայ անհատի և ընդհանուր-հասարակական մարմնի մէջ:

Բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների նախնական, ամենապարզ ձևը, այդպէս ասած՝ հասարակական օրգանիզմի բջիջը — արիւնակցական կապերով միացած գերդաստանն է, որը էապէս մի կօմմունիստական (համացեղական) կազմակերպութիւն է, ուր առանձին տնտեսութիւնները ինքնընտանիքեան՝ շատ չնչին նշանակութիւն ունի: Այստեղ անհատական իրաւունք ասած բանը գոյութիւն չունի, գոնէ այն մտքով, ինչպէս այդ մեր օրերումն է հասկացում. բոլոր պարտաւորութիւններն ու ծառայութիւնները, նոյնպէս կայքը, կալւածքը, պարտքը, երբեմն նոյն իսկ ամուսնութիւնը՝ ընկերական են: Օրինակ, արեան վրէժ առնելու սովորութիւնը, որ այդ սկզբնական կազմութեան մէջ ամենատարածւած երևոյթներից մէկն է, համայնքի ամբողջութեան վերաբերող գործ է, այնպէս որ այդ դէպքում կատարելապէս միւսնոյն է, թէ վրէժը ումից է առնւում՝ բուն յանցաւորից, թէ նրա որևէ ցեղակցից: Այդպիսի կազմակերպութեան մէջ գոյութիւն ունեցող սերտ ընկերակցութեան հետեանքն է այն հանգամանքը, որ առանձին անհատները հաւասար իրաւունքներ են վայելում, և հէնց պարագլուխների իրաւունքն էլ բաւականաչափ սահմանափակւած է: Այդ արիւնակցական կազմակերպութիւնից դուրս գտնւող բոլոր մարդիկ համարւում են թշնամի և իրաւագուրկ, այնպէս որ կարելի է ներքանց սպանել և անպատիժ մնալ: Զանազան ազ-

գերի մէջ մինչև այժմ էլ նկատուում են այդօրինակ դրութիւններ, որոնք բնորոշ մնացորդներ լինելով, գաղափար են տալիս մեզ նախկին կազմակերպութեան մասին: Այդպէս են, օրինակ, միատեսակ ծագում ունեցող Ֆրատրիները Յունաստանում, կամ Կուրիները Հռոմում, որոնց նախնական միութիւնը երևում է ընդհանուր դաւանանքից. նոյնն են և Հիւսիսայն Ամերիկայի վիսնուօտական ցեղակցութիւնները, Պալաուս կղզու ազգաբնակիւթիւնը, նոր-գէլանդացիք, մալայեցիք, որոնք անփոփոխ պահպանել են նախնական կազմակերպութիւնը: Ինչպէս վերը շեշտեցինք, նախնական շրջաններում իրաւունքը տակաւին բարքովարքի և առհասարակ ընդհանուր կեանքի անբաժան մասն է կազմում, այդ պատճառով կրօնը և օրէնքը (իրաւունքը) սերտ կերպով շաղկապւած են լինում իրար հետ, ինչպէս այդ երևում է հնագոյն օրէնագրքերից: Բրահմանական Հնդկաստանում կրօնական պատելրանի խախտելը պետական-օրինական յանցանք է համարւում, և յանցաւորը օրէնքով պատժւում է: Հռոմէական «տասներկու տախտակ» կոչւած պետական օրէնագրութիւնը պարունակում էր նոյն իսկ թաղման կարգերը: Մահմեդական երկրներում օրէնքով որոշւած են՝ ջրի գործածութիւնը մաքրութեան նպատակով, աղօթքները, ուխտագնացութիւնը, անհաւատների դէմ պատերազմ մղելը և այլն: Հին Յունաստանի օրէնագիր Սօլօնը իր քաղաքացիա-

կան օրէնքները հիւսել էր համապատասխան կրօնական պաշտամունքների ու պարտաւորութիւնների հետ: Իրաւունքի էութիւնից ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ տնտեսական յարաբերութիւններն էլ, օրինակ, հողատիրութեան պայմանները, նոյնպէս այդ շրջանակի մէջ են մտնում:

Մենք ասացինք, որ ընդհանուր կազմակերպութեան մէջ սովորաբար անհատը աչքի ընկնող ազդեցութիւն չունի: Սակայն պէտք է խոստովանել, որ անհատը այնուամենայնիւ որոշ չափի ինքնուրոյնութիւն ունի: Հէնց այստեղից է առաջանում այն հանգամանքը, որ ոչ մի կազմակերպութիւն չէ կարողանում միշտ միևնոյն դրութեան մէջ մնալ, առանց որևէ նոր ձևակերպութեան ենթարկւելու: Որքան էլ մենք համոզւած լինենք, որ իրաւունքի բովանդակութիւնը և իմաստը որոշողը ընդհանուր կազմակերպութիւնն է, բայց և այնպէս չենք կարող մերժել, որ իւրաքանչիւր անհատ ի բնէ ընդունակ է, հանգամանքներին նայելով՝ զանազանութիւն դնել արդարութեան և անարդարութեան, բարիքի ու չարիքի մէջ: Եթէ բացասէինք անհատի այդ ընդունակութիւնը, այն ժամանակ մենք չէինք կարող հողերանօրէն բացատրել հասարակական կազմակերպութեան ձևափոխութիւնները, որը յամենայն դէպս չէ կարելի լոկ մեխանիկական պրօցեսս համարել: Յիշեալ ընդունակութեան շնորհիւ է, որ անհատը կարողանում է յարմարւել

կենսական արտաքին պայմաններին, մի տեսակ շաղկապւել իր շրջապատի հետ: Հասարակական կեանքը անհատի համար նոյնն է, ինչ որ երեխայի համար իր ծնողները կամ ուսուցիչները: Ծնողների և ուսուցիչների ազդեցութեան տակ երեխայի գիտակցութիւնը հետզհետէ զօրեղանում է. երեխան սկսում է թոյլատրւած և արգելւած բաները իրարից զանազանել: Բարոյական և իրաւական սկզբունքները արմատ են բռնում երեխայի սքոտի ու մտքի մէջ՝ իրանց հասարակական լայն նշանակութեամբ: Այդպէս էլ ընդհանուր-հասարակական սկզբունքները աննկատելի կերպով կրթում են անհատի հոգին, մինչև որ նրան ընդունակ են դարձնում՝ գիտակցաբար դատելու և եզրակացութիւններ անելու: Այդպիսի ընդունակութիւն ձեռք բերելուց յետոյ անհատը ինքը կարողանում է քննադատաբար վերաբերւել դէպի ամեն մի հասարակական սկզբունք, այնուհետև յայտնւում է անհատի գորութիւնը, որը ձգտում է աւելի կատարելագործւած ձևեր ստեղծել հասարակական կեանքի համար: Այդ է անա առաջնորդող հոգիների զազանիքը. նրանց տիրապետող գորութիւնն է, որ մի առանձին ուժով երևան է գալիս հասարակական կեանքի ծանր ճգնաժամերին: Այստեղից են բղխում նոյնպէս այն յանցանքներն ու օրինազանցութիւնները, որ յաճախ անբերելի կերպով տեղի են ունենում՝ հակառակ պաշտօնապէս ընդունւած պետական կարգաւորու-

թեան. նոյն պատճառներով է բացատրուում իրար դէմ պայքար մղող կուսակցութիւնների գոյութիւնը: Բայց ընդհանրապէս առած՝ կեանքին ուղղութիւն տւողը ամբողջութեան կողմից ընդունւած իրաւունքն է, ահա թէ ինչու միջին տեսակի մարդը, որը ղեկավարուում է լույ հասարակական անզիտակցական սկզբունքներով, և հետեապէս զուրկ է ինքնուրոյն զարգացած դատողութիւնից, յաճախ ամենամոլեռանդ կերպով դիմադրում է նորածին մտքերին ու գաղափարներին: Նա մի կատարեալ Ֆանատիկոս է՝ զուրկ ինքնուրոյն քննադատութիւնից: Նոյնիսկ ամենամեծ բռնակալի սրտումը վերջապէս հնչում է խղճի ձայնը, որ դատապարտում է նրա անօրէնութիւնները, ինչպէս այդ նկարագրում է բրիտանական հանճարը (Շէկսպիրը)՝ Բիչարդ երրորդի պատկերով: Երբեմն խիղճը մինչև անգամ երազի մէջ է զարթնում ու անհանդիստ է անում յանցաւորին: Բայց խիղճը ուրիշ բան չէ, բայց եթէ բարքովարքի ու իրաւունքի միահամուռ բողոքը: Արտաքուստ դիտելով, այսինքն բովանդակութիւնը մի կողմ թողնելով, կարելի է ասել, որ իրաւական կեանքը գլխաւորապէս հետեւեալ պատկերն է ներկայացնում. մի կողմից խախտուում է ընդհանուր համաձայնութեամբ ընդունւած կարգաւորութիւնը, իսկ միւս կողմից աշխատանք է գործ դրուում՝ խորտակւած հաւասարակշռութիւնը նորից վերականգնելու համար: Այստեղից է առա-



ջանում նախնական կեանքի վերականգնումը կտրոււմ սկզբունքը թէ՛ աչքի փոխարէն պէտք է աչքը հանել, ատամի փոխարէն մտքը: Այսինքն անհարկ հեշտ է լինում հատուցման գործը այն ժամանակ, երբ արդէն գոյութիւն ունի անհատական սեփականութիւնը. այս դէպքում կարելի է հատուցումը կատարել դրամի կամ մի ուրիշ արժէչափի միջոցով, որը հնարաւոր է դարձնում հասցրած փութի աւելի ճիշտ որոշումը, մի բան, որ մարմնական փաստ հասցրած դեպքերում, ի հարկէ, շատ աւելի դժւար է: Նախնական իրաւաբանութեան մէջ բնորոշ է այն հանգամանքը, որ իսկական յանցանքի ու պատահական դժբաղդութեան մէջ ոչ մի տարբերութիւն չէ դրուում. արդեօք գործը կատարողը իսկապէս մեղաւոր է, թէ ոչ — այդ մասին հարցնող չկայ, այդ միևնոյն է. հարցը միայն նրա մէջ է, թէ ինչպէս վերականգնել խորտակւած հաւասարակշռութիւնը, այսինքն փաստը հատուցանել: Ամենամեծ պատիժը, որին կարող է ենթարկել յանցաւորը՝ նրան հասարակութեան միջից տրտաքսելն է, որովհետև այս դէպքում նա զրկուում է համայնքի պաշտպանութիւնից, այնպէս որ իւրաքանչիւր մարդ կարող է առանց այլ և այլի սպանել նրան: Քաղաքակրթութեան այդ շրջանում խօսք լինել չէ կարող կատարւած գործի անսպառ բնութեան մասին, չկայ իսկական դատավարութիւն, չկան որոշ օրէնքներ այս ու այն յանցանքի համար, այլ ամբողջ

ԼՍՍԻ

դատավարութիւնը լոկ վրիժառութեան կամ վնասի հատուցման կերպարանք ունի: Այդ դրութիւնը արտայայտուում է մի դարձածքի մէջ, որը մինչև օրս ժողովուրդը գործ է ածում՝ «տեղը հանեց կամ իրը առաւ» — երբ մէկը առանց դատաստանին դիմելով՝ բաւարարութիւն ստանալու միջոց է գտնում: Ժողովրդական կեանքի խառնակ ժամանակներում, մանաւանդ երբ ցեղական կրքերը գրգռւած են լինում, տեղի է ունենում այդպիսի արագավճիռ դատապարտութիւն՝ պետական-կառավարչական արդարագատութեան հակառակ: Լինչի օրէնքը անուշի ուժով պահանջում է իր տարաբախտ զոհերը, ինչպէս այդ տակաւին սարսափելի ծաւալով կրկնւում է Ամերիկայի Միացեալ Նահանգներում:

Մենք ընդհանուր գծերով պարզեցինք իրաւունքի ծագումը: Իսկ իրաւունքի յետագայ գրաւոր արտայայտութիւնը որոշ օրէնսգրքերի ձևով մեզ այստեղ չէ գրադեցնում: Այժմ մեզ մնում է մի համառօտ հայեացք պցել իրաւունքի ալատմութեան վրա, այսինքն ցոյց տալ, թէ հասարակական կազմակերպութիւնը, սկսելով իր նախնական պարզ դրութիւնից, ինչպէս է հետզհետէ բարեփոխել, մինչև որ հասել է ներկայ աւելի կատարելագործւած ձևերին: Այստեղ դարձեալ մենք պիտի հիմնենք ազգագրութեան տւած դրական փաստերի վրա, որպէսզի չը մոլորենք երևա-

կայական ապարդիւն դատողութիւնների ծուռութեամբ շաւիղների մէջ:

Հասարակական կազմակերպութեան ձևերը բազմաթիւ են, բայց նրանք բոլորը կարող են չորս կարգի բաժանուել: Այդ կարգերից իւրաքանչիւրը ներկայացնում է մի անցողական աստիճան՝ հետևեալ կարգի համար: Այնպէս որ այստեղ ևս նկատուում է զարգացման այն նշանաւոր սկզբունքը, թէ իւրաքանչիւր նոր ձևը օրգանական եղանակով ծագում ու առաջ է գալիս նախորդ ձևից: Յիշեալ չորս կարգի կազմակերպութիւնները կարող են որոշել հետևեալ մականուններով՝ ցեղական-համայնական, համերկրական (դրացիական), իշխանական և վերջապէս, ինքնավարական միութիւններ:

1. Յեղական համայնքը ներկայացնում է բոլոր յետագայ-կազմակերպութիւնների բջիջը և հիմնւած է ընդհանուր ծագման, այսինքն արիւնակցութեան վրա. արիւնակցութիւնը հասարակական ամենասոմուր կայն է, մանաւանդ մօրից սկիզբ առնող արիւնակցութիւնը: Մի պարզ գերդաստանից հետզհետէ առաջ է գալիս մի ամբողջ ցեղ: Այդ արիւնակցական, հարագատ, շըրջանում ներքուստ գոյութիւն է ունենում մի սերտ մտերմութիւն, որին համապատասխանում է նոյնքան զօրեղ խորթութիւն գէպի օտարացեղերը. իւրաքանչիւր ցեղակից բարեկամ է, իսկ իւրաքանչիւր օտարական թշնամի: Կենսական միջոց-

ները ձեռք են բերւում ընդհանուր ոյժերով, և առհասարակ ամբողջ անտեսութիւնը ընդհանրական բնաւորութիւն ունի: Անհատական ինքնուրոյնութիւնը զարգացած չէ. բոլոր պարտաւորութիւնները և իրաւունքները ընդհանուր ընկերական են, ինչպէս և նիւթական պարտքերը, և իսկ յանցանքները: Այդ պատճառով, արեան վրէժի դէպքում միևնոյն է, թէ ով է պատասխանատու թեան ենթարկւում՝ բուն մեղաւորը, թէ նրա մի որ և է ցեղակիցը: Կրօնական գարգացումը չէ անցնում անային կամ ցեղական աստուծուն պաշտելու սահմանից: Նոյն իսկ հռոմէական իրաւունքը պահել է այդ հնագոյն հայեացքների հետքերը: Տեղն ունի իր որոշ հողաբաժինը, որին հովանաւորում են ցեղական աստուծները, եթէ թշնամին գրաւէ այդ հողաբաժինը, իսկոյն հողը կը զրկէ աստուծոյ բարեբար ազդեցութիւնից: Այդ սերտ յարաբերութեան հետքերը երկար ժամանակ մնացին, երբ նոյն իսկ հասարակական կազմը փոխւած է լինում: Ուէլսում մէկ ցեղին պատկանող անդամները իւրաքանչիւր դժբախտութեան դէպքում պաշպանութիւն ու հովանաւորութիւն էին գտնում ամբողջ ցեղի կողմից: Հարկաւոր դէպքում ցեղը առհաւատչեայ է կանգնում դաաստանի առաջ կամ ցեղակիցներից մէկին գերութիւնից ազատելու համար: Հնդիկների մէջ, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայում, իւրաքանչիւր ցեղ իր ներկայացուցիչն է համա-

րում մի որոշ կենդանի, որը և պաշտամունքի առարկայ է լինում և ցեղի նահապետն է կոչւում: Քաղաքակրթական այդ շրջանում նշանադրութիւնը և ամուսնութիւնը նոյնպէս անհատական հակման արդիւնք չէ, այլ նախ և առաջ վերաբերում է ամբողջ ցեղին և, կարելի է ասել, կախւած է ցեղապետի վճռից:

2. Հասարակական կազմակերպութեան երկրորդ ձևը-համերկրական միութիւնն է. այդ ձևը առաջ է գալիս, երբ թափառական որսորդական ցեղերը ցրւում են և այստեղ ու այնտեղ հաստատուն բնակավայրեր են կառուցանում: Նախկին ընկերական անտեսութիւնը քայքայւում է, միայն մի քանի հետքեր թողնելով: Այլևս կեանքին ուղղութիւն տալը արիւնակցական կապը չէ, այլ ընդհանուր բնակատեղին, հողը, հայրենի երկիրը, թէև դեռ բազմիցս նկատւում են նախկին գերդաստանական յարաբերութիւնները: Որսորդութիւնը և արածացնելու գործը ընկերական ձևով է կատարւում: Երկրագործական աշխատանքներին մասնակցում են ամենքը, և արդիւնքը բաժանում են իրանց մէջ: Բայց հետզհետէ սկսում են հողերը իրանց մէջ բաժանել, թէև դեռ ժամանակաւոր կերպով: Իսկ եթէ մէկը ինքը էր աշխատանքով (օրինակ, խիտ անտառներ կտրատելով) կարողանում է ձեռք բերել վարուցանքսի համար մի նոր գետին, այդ հողաբաժինը նա կարող է ցանել, որքան ժամանակ կամենայ: Այդ

համերկրական միութիւնը կառավարում է ինքն իրան և նրանց առաջնորդները ունենում են դատը վարելու ինքնուրոյն իրաւունք: Համերկրական կազմակերպութեան մէջ դատը վարում են պարագլուխները ինքնաբերաբար. բայց նրանց կից գոյութիւն ունի և ծերակոյտը, այսինքն տարիքով ու փորձառութեամբ աչքի ընկնող մարդկանց խորհուրդը: Երբեմն այդ խորհրդական մարմինը այնպէս գորեզանում է, որ վայր է գլորում առաջնորդին և նորն է նշանակում: Ծերակոյտից բաց, հարկաւոր դէպքում դեր է խաղում և բոլոր հասակաւոր աղամարդկանց ընդհանուր ժողովը, որ կայանում է որոշ սրբագործւած տեղերում, օրինակ շուկայում կամ մի հինաւուրց ծառի տակ: Այդ շրջանում առանձնապէս խիստ է լինում վերջ յիշւած արտաքսման պատիժը, երբեմն յանցաւորին և նրա ընտանիքի բոլոր անդամներին սպանում են, իսկ նրա սեփականութիւնը գրաւում են. օրինակ Պերուում, Չինաստանում և թուրքմենների երկրում: Յաճախ պատժւում է միայն յանցաւորը: Պատահում է, որ պատիժը թեթեւացնում են այն մտքով, որ որոշ ժամանակամիջոց են նշանակում, որի ընթացքում յանցաւորը կարող է փախչել, օրինակ՝ Շորիայում մինչև արևի մայր մտնելը, Նոր-Չէլանդիայում մինչև հետևեալ գիշերը, իսկ Իւտլանդիայում՝ մի ամբողջ ամիս: Գալիս է ժամանակ, երբ վնդեղու սովորութիւնը վերանում է, բայց նրա հետքերը

դեռ երկար նկատւում են՝ յանցաւորի տան մի մասը քանդում են, կամ նրա կայքը կողոպտում են, իսկ նա իրաւունք չունի հակառակելու: Այդ սովորութիւնը կայ հնդկացոց, պոլինեզացոց և սլաւօնների մէջ:

3. Հասարակական զարգացման երրորդ աստիճանը ներկայացնում է իշխանական-տիրապետական կազմակերպութիւնը, ուր որոշում են սովորաբար երկու դասակարգեր՝ տէրեր և ստրուկներ, կամ ազատներ և անազատներ: Ազնւականութիւնը կազմում է հասարակութեան վերին շերտը, իսկ ժողովուրդը-վարինը: Մի կողմից հրաման ու հսկողութիւն, իսկ միւս կողմից հնազանդութիւն: Այդպիսի դասակարգութիւնը ծագում է մերթ պատերազմից, ըստ որում, յաղթանակ տանողները ստրկացնում են մի ամբողջ ժողովուրդ, կամ թէ գերի վերցրած անհատներին (Սպարտայի հելլոսները, Եգիպտոսի ստրկական ժողովուրդները, նոյնպէս չէրքէզների և հին իսրայէլացիների մէջ): Պատերազմից բաց, ստրկութիւնը առաջանում է և ուրիշ պատճառներից, օրինակ, մէկի պարկացնում են, երբ նա չէ կարողանում վճարել իր պարտքը: Ծանր տարեշրջաններում, պաշտպանութեան կարօտ անձնաւորութիւնները մտնում են աւելի զօրեղ անհատների թեի տակ և հրաժարւում են իրանց անկախութիւնից (հնդկացոց, կելտերի և նեգրների մէջ), երբեմն էլ մէկին ստրկացնում

են իբրև պատիժ այս ու այն յանցանքի համար (Մեկսիկայում, Չինաստանում, Հնդկաստանում)։ Տէրը կարող է սրտի ուզածի պէս վարել ստրուկի հետ, ստրուկը սոսկ ապրանք է, շտարկայ է։ Տէրը իրաւունք ունի նոյն իսկ սպանելու նրան։ Հեղհետէ, ի հարկէ, այդ իրաւունքը սանձանափակում է. օրինակ՝ սպանելը արգելում է, իսկ ծեծելը միայն ծանր յանցանքի դէպքում է թոյլատրւում, ստրուկին վաճառելը տեղի է ունենում որոշ յանցանքի պատճառով, կամ թէ կանոնաւոր դատաստան անելուց յետոյ, կամ թագաւորի համաձայնութեամբ։ Ստրուկը պարտաւոր է որոշ ծառայութիւն մատուցանել, սուրբ վճարել, անունդի միջոցներ գտնել, օգնել որսորդութեան ժամանակ, երկիրը մշակել, պատերազմ գնալ և այլն։ Տէրն էլ իր կողմից պատասխանատու է հպատակի համար, այն էլ ոչ միայն կայքով այլ և իր անձով. պատահում է, որ ստրուկի պատճառով ինքը տէրը ստրուկ է դառնում։ Պիտի յիշենք, որ շատ տեղեր ստրկութիւնը ժամանակաւոր է լինում (ոչ ամբողջ կեանքում) և ստրուկի կինն ու երեխաները ազատ են համարւում։ Ստրուկը ազատւում է, փրկանք վճարելով, կամ եթէ մի ծանր մարմնական արատ է ստանում, կամ թէ կարողանում է փախչելով հասնել մի սրբազործւած փախստարան։ Մեր նկարագրած դարեշրջանում առաջ են գալիս իշխաններ ու թագաւորներ, որպէս լինում էր միջնագարեան

Նւրոպայում, աւատականութեան ու բռնակալութեան դարերում։ Բայց այդ իշխանութիւններն ու թագաւորութիւնները, որքան էլ նման լինեն գլխաւոր գծերով, այնուամենայնիւ շատ են տարբերւում իրարից՝ երկրորդական հանգամանքների մէջ։* Մի տեղ՝ իշխանի տիրապետութիւնը հիմնւած է ժառանգական իրաւունքների վրա, մի ուրիշ տեղ՝ որոշ մարմնական կամ հոգեկան առաւելութեամբ օժտւած մէկը ինքն իրան իշխան է դարձնում։ Երբեմն իշխանը կամ թագաւորը ընտրւած է լինում ցամահ, երբեմն էլ միայն ժամանակաւոր։ Իշխանական ոյժը և իրաւունքը գօրեղանում է այն դէպքում, երբ իշխանութիւնը ժառանգական է լինում, և առաջ է գալիս իշխանական որոշ տոհմ և մի առանձնաշնորհեալ դասակարգ։ Այդ դէպքում սովորաբար ժառանգութիւնը անջնում է իշխանի անդրանիկ որդուն կամ գերդաստանի ամենատարիքաւոր անդամին։ Կան դէպքեր, երբ ժողովուրդը իշխան է ընտրում միայն պատերազմի համար, և հէնց որ խաղաղութիւնը վերականգնում է, իշխանն էլ զրկւում է իր իրաւունքից։ Վերջապէս պատահում է, որ իշխանը ոչ մի իրական ազդեցութիւն չունի, այլ նրա անունը միայն բարոյական նշանակութիւն ունի։ Բայց երբեմն կշխանի ազատ կամքից է կախւած լինում իւրաքանչիւր հպատակի կեանքն ու մահը, և նոյն իսկ իշխանական գերդաստանի անդամները միայն ստրուկներ են համարւում միա-

պետի առաջ: Այժմ կը յիշենք մի քանի միջին տեղ բռնող կազմակերպութիւններ: Կան բռնակալ իշխաններ, որոնք սրտի ուզած ժամանակ, կամ զայրացած գէպքում, անխնայ կոտորում են իրանց հպատակներին (օրինակ՝ Աֆրիկայի Նիամ-նիամների մէջ), կամ թէ ազատ կերպով ծախում են հպատակների անձը կամ նրանց կալածքները (գահօմէնների և քաֆրների մէջ), կամ թէ իշխանը իր առանձնաշնորհումն է համարում երկրի այս ու այն բերքի տիրել (նեգրական շատ ցեղերի մէջ): Նա միաժամանակ բոլոր զօրքերի գլխաւոր հրամանատարն է, դատաւորանն էլ ինքն է անում և դատավճիռ կայացնում, տուրքեր է նշանակում (անասուններից, հողագործութեան արդիւնքներից, առևարից, ներմուծող ապրանքներից): Մանաւանդ սպառնալի է իշխանի դիրքը, երբ նա միաժամանակ հոգևոր գլուխ է համարւում, այնպէս որ իր գլուխը զարդարում է կրօնական ճաճանչապսակով և ձեռքին բռնում է քաղաքական գաւազանը: Այդ գէպքում շատ անգամ Աստուծոյ տեղ պաշտում են իշխանին, երկրպագում են նրա առաջ, փոշիով ծածկում են իրանց գլուխը, հպատակը իրաւունք չունի՝ իշխանի երեսը տեսնելու, երբ մն էլ իշխանը աներևոյթ է համարւում: Մանաւանդ չէ կարելի տեսնել թագաւորի երեսը, երբ նա ուտում կամ խմում է՝ չլինի թէ «աչքով անեն»: Իշխանական տիրապետութեան այդպիսի զօրութեան հետ միասին, բնա-

կանաբար մեծանում է և նրա պարտաւորութիւնը. իշխանը պատասխանատու է հասարակական ծանր դժբախտութիւնների համար, այնպէս որ այս գէպքում նա պիտի իր բոլոր ճարպիկութիւնը գործ դնէ, որպէսզի չը զրկւի գահից, կամ նոյն իսկ կեանքից: Գահը ըստ կարելոյն ապահովելու համար՝ իշխանը յաճախ հեռացնում է իր մօտաւոր ազգակիցներին (Տաճկաստանում, Պարսկաստանում և Հաբէշտանում). պատահում է, որ գահաժառանգը վարձ ստանալով ծախում է գահը իր ազգակիցներից մէկին: Երբ գահաժառանգը չափահաս է դառնում, շատ անգամ ծերացած հայրը կամաւոր կերպով հրաժարւում է գահից, կամ թէ տեղի է տալիս մի ներքին, եղբայրասպան կոտորածից յետոյ: Անընդունակ իշխանին երբեմն զօրով հեռացնում են գահից: Իսկ եթէ իշխանը կարողանում է իր դիրքը պահել մինչև մահ, ապա նրա թաղման օրը բաւական մարդիկ են մորթւում գերեզմանի վրա: Իշխանի շուրջը աչքի է ընկնում նրա շքախումբը, որը մանաւանդ աւատական երկիրներում բարձր նշանակութիւն է ձեռք բերում, ինչպէս միջնադարեան Եւրոպայում, Ճապոնում և Չինաստանում: Այդ աւատական կարգերը ամեն տեղ յայտնի են: Միջնադարեան Եւրոպայի ամբողջ պատմութիւնը, առասպելը, բանաստեղծութիւնը ցոլացնում են աւատական կարգերը և պատկերացնում են հողատիրոջ ու կապալառուի յարաբերութիւնները: Այդ

նոյն սխտեմը տիրապետում էր Ճապոնում մինչև 19-րդ դարի եօթանասնական թիւը: Միայն 1868 թւին յեղաշրջեց ամեն բան. Միկադօն, որ առաջ միայն մի ձևական իշխան էր, դարձրեց իր երկիրը մի սահմանադրական զօրեղ միապետութիւն: Շատ անգամ թագաւորի կողքին լինում է և մի իշխանական խորհուրդ, որին նա ղեմում է հարկաւոր ժամանակ, եթէ և ոչ պարտադիր կերպով: Քաղաքակրթութեան զարգացման ընթացքում հետզհետէ անհետանում են դասակարգային տարբերութիւնները, և առանձնաշնորհումները կորցնում են իրանց նշանակութիւնը: Օրինակ, Չինաստանում ազնւականութիւնը այժմ մի ձևական տիտղոս է դարձել, որը ոչինչ քաղաքական նշանակութիւն չունի և նոյն իսկ ժառանգական չէ: Արևմտեան Եւրոպայում ազնւականութիւնը բաւականաչափ թուլացել է, թէև դեռ շարունակում է մաքառել իր գոյութիւնը պահպանելու համար: Մի ժամանակ մինչև անգամ ամուսնութիւնը օրէնքով արգելւած էր՝ զանազան դասակարգերին պատկանողների մէջ, իսկ այժմ այդ արգելքը վերացած է, թէև դեռ գործնական կեանքի մէջ այդ խորթութիւնը որոշ ազդեցութիւն ունի, մանաւանդ երբ հարցը թագաւորական ցեղերին է վերաբերում:

4. Վերջապէս ամենաբարձր աստիճանը գրաւում է՝ մեր դարը բնորոշող ինքնավարական կազմակերպութիւնը, որ հիմնւած է առանձին ան-

հատների փոխադարձ համաձայնութեան վրա: Այստեղ արդէն պարզ կերպով արտայայտւում է անհատի իրաւունքն ու պարտաւորութիւնը: Այդ աստիճանի մի արտաքին նշանը քաղաքացիական օրէնսդրութիւնն է: Մինչդեռ առաջ ցեղը, համայնքը կամ իշխանն էին պատասխանատու՝ հպատակի բոլոր գործույութիւնների համար, այժմ անհատը, եթէ նա չափահաս է և հոգեպէս առողջ, ինքն է ամբողջովին պատասխանատու իր բոլոր գործերի համար: Այդ անսահման ազատութեան հիման վրա կազմւում են բոլոր միութիւնները, որոնք որոշ պայմաններով կանօնաւորում են իրանց անդամների պարտաւորութիւնները: Զանազան նպատակներ ու միջոցներ ունեցող՝ այդպիսի ընկերութիւնները մեր ժամանակ իսկապէս ծաղկած դրութեան մէջ են, որովհետև մի կողմից համապատասխանում են ժամանակակից մարդու ազատասիրական ձգտումներին, իսկ միւս կողմից, որովհետև զարգացել է այն զիտակցութիւնը, թէ ոյժերի ու կապիտալների միացմամբ, մարդկային աշխատանքը աւելի արդիւնաւոր է դառնում: Իսկ այժմեան պետութիւնները ներկայացնում են հասարակական կազմակերպութեան բոլոր աստիճանները, այսինքն այս թէ այն կերպով պահում են մեր նկարագրած համայնական, համերկրական և իշխանական ձևերը: Մինչդեռ Արևելեան Ասիայի կիսաքաղաքակիրթ երկրներում համայնքը, ցեղը, տակաւին պետական կազմակերպութեան անձեռն-

մխելի հիմքն է կազմում, եւրոպական՝ քաղաքակիրթ երկրներում բոլորովին կորցրել է իր քաղաքական նշանակութիւնը: Կան երկիրներ, ուր դասակարգային տարբերութիւնները տակաւին պահպանում են իրանց նշանակութիւնը, օրինակ Հնդկաստանում: Իսկ ժամանակակից հանրապետական երկիրներում համայնական ձգտումները շողկապւած են ազատ ընկերական սկզբունքների հետ, ուստի և ազնւականութեան նախկին առանձնաշնորհումները խիստ սահմանափակւած են: Մէկ տեղ՝ հաստատուն սահմանադրութեամբ չափաւորւած են թագաւորի կամ կայսրի իրաւունքները (սահմանադրական միապետութիւններում), մի ուրիշ տեղ՝ կառավարութիւնը դեռ պահել է անսահման միապետութեան ձևը (Չինաստանում ու Ռուսաստանում): Ուրեմն մեր ժամանակն էլ չը նայելով իր գլխաւոր միատեսակ ձգտումներին, տակաւին ներկայացնում է բացառիկ երեւոյթների մի ճոխ բազմատեսակութիւն:

Իրաւունքի զարգացման մասին մեր տւած բացատրութիւնից կարելի է մի քանի կարևոր եզրակացութիւններ անել՝ ընդհանրապէս մարդկային իրաւական կեանքի վերաբերմամբ: Ինչպէս մենք արդէն մեր տեսութեան սկզբում որոշեցինք, մեր բոլոր հետազօտութիւնների մէջ պիտի փորձից չը հեռանանք, նիւթ քաղելով ազգագրութիւնից և քաղաքակրթութեան պատմութիւնից: Եւ հաւաքովը հասարակական ձևերը իրար հետ հա-

մեմատելով մենք նկատում ենք հետեւեալ երեւոյթը, կան որոշ հիմնական գծեր, որոնք ամեն տեղ և ամեն ժամանակ կրկնւում են, բայց միաժամանակ գոյութիւն ունեն անթիւ բացառութիւններ: Եթէ իրաւունքը ինչպէս որոշ հասարակական յարաբերութիւնների արտացոլումն է, ինչպէս մենք արդէն համոզւեցինք, ապա նա պիտի զանազան ազգերի մէջ միևնոյն պատկերն ունենայ, եթէ շրջապատող պայմանները միատեսակ են: Եւ իրօք, այդ բանը բաւական պարզ կերպով նկատւում է, միայն թէ նախնական ազգերի մէջ: Իսկ յետագայում, այսինքն աւելի քաղաքակրթւած շրջաններում, յիշեալ պատկերը պղտորւում է, համեմատական հետազօտութիւնը դժւարանում է, որովհետև հասարակական կեանքի մէջ բազմաթիւ կողմնակի հոսանքներ են խառնւում, պատմական արհաւիրքները և ժողովրդական տեղափոխութիւնները ամեն բան խառնըշտորում են: Սակայն ժամանակակից դրական հետազօտութիւնը կարողացել է գտնել բազմաթիւ միատեսակ ձևեր՝ միմեանցից բոլորովին օտար ազգութիւնների մէջ. ահա այդ հիմնական ձևերը կազմում են ընդհանուր մարդկութեան ժառանգութիւնը: Ի հարկէ, միատեսակ ձևեր ասելով մենք չենք ուզում ասել, թէ նրանք գոյութիւն ունեն միևնոյն ժամանակներում. հարցը վերաբերում է ոչ թէ տարեշրջաններին, այլ հասարակական կազմակերպութեան աստիճաններին,

որոնք միմեանց յաջորդում են միայն մի որոշ ազգի և ոչ թէ ընդհանուր մարկութեան մէջ: Ինչ վերաբերում է ընդհանուր մարդկութեան, այստանդ մինևկոյն տարնշրջանում գտնուում են մի տեղ՝ նախնական ժողովուրդների ողորմելի կազմակերպութիւնները, իսկ միւս տեղ՝ նուրբ քաղաքակրթութեան ստեղծած կատարելագործւած հասարակական միութիւնները: Հանրամարդկային վերոյիշեալ երևոյթների շարքին պատկանում են, օրինակ, ~~ամուսնութիւնը~~, արիւնակցական բարեկամութիւնը, թոյլերի խնամատարութիւնը, յանցաւորի դատապարտութիւնը և այլն: Այդպիսի հիմնարկութիւնները ընդհանուր-տիպական են, այսինքն միշտ և ամեն տեղ գոյութիւն են ունենում, չնայելով ազգային առանձնայատկութիւններին: Սրանցից տարբերում են այնպիսի սովորութիւնները և հիմնարկութիւնները, որոնք թէև չափազանց շատ են տարածւած, բայց և այնպէս չեն կարող անպայման-ընդհանրական համարել: Աւելի ևս օտարօտի զրութիւն է առաջանում, երբ խնդիրը վերաբերում է ոչ թէ մի ազգի կեանքի ընտան-օրգանական զարգացման, այլ շատ թէ քիչ բռնի կերպով արտաքուստ ներմուծւած երևոյթներին: Այդպէս է, օրինակ, հռոմէական իրաւունքը գերմանացիների մէջ, Իսլամը Աֆրիկայում, հընդ-կական իրաւունքը-Բիրմայում և այլն: Աւելի խորը հետազօտելով, մենք կը գտնենք, որ իրաւունքը ներկայացնում է բազմատեսակ հասանքների են-

թարկւած մի պատկեր, ուր այդ պատճառով միշտ կարելի է նկատել բոլոր հին կարգերի հետքերը ու մնացորդները: Միայն ազօտ լոյսով լուսաբանւած նախնական շրջաններն են ցոյց տալիս որոշ պարզութիւն ու թափանցիկութիւն, մինչդեռ յետագայում հին հայեացքներն ու սովորութիւնները հանդիսանում են իբր արգելափակ ոյժեր՝ հասարակական առաջադիմութեան տեսակէտից, այնպէս որ առաջ են գալիս յաճախ ուժեղ պայթումներ և յեղափոխութիւններ: Ահա թէ ինչ է ասում յայտնի հասարակագէտ Պօստը: «Ընդհանրապէս ասած, որևէ ազգի քաղաքակրթութիւնը ոչ թէ որոշ ժամանակամիջոցում գոյութիւն ունեցող սերունդի արդիւնքն է, այլ աւերակների մի ամբողջ կոյտ է, որ գոյացել է հարիւրամեակների ու հազարամեակների ընթացքում՝ խորտակւած ձևերի փլւածքներից: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իւրաքանչիւր սերունդ էլ որևէ նոր բան արդիւնաբերում է, սակայն այդ արդիւնքը չափազանց չնչին է՝ համեմատած այն բոլորի հետ, ինչ որ իւրաքանչիւր սերունդ ժառանգում է նախնիներից: Հէնց այդ է պատճառը, որ մի ազգի կեանքը չէ կարելի ըմբռնել, հիմնելով նրան պատկանող մէկ որոշ սերունդի ձգտումների ու պահանջների վրա, ինչպէս շատերը իզուր աշխատում են: Ազգային կեանքը պատմական երևոյթ է, ուստի և պատմաբանօրէն պէտք է հասկանալ նրան, ազգային կեանքը միշտ պարունակում է

իր մէջ բազմաթիւ սկզբունքներ ու հիմնարկութիւններ, որոնք պատկանում են վաղուց-անցած ժամանակներին, և միայն յարատևութեան օրէնքի գօրութեամբ են իրանց գոյութիւնը պահպանում և սերունդ առ սերունդ անցնում, թէև իրանց իսկական նշանակութիւնը վաղուց են կորցրել: Այդպիսի հայեացքները ու սովորութիւնները չենք կարող հասկանալ, եթէ ի նկատի առնենք միայն ժամանակակից պայմանները, բայց նրանք հասկանալի կը դառնան, եթէ ուշադրութիւն դարձնենք՝ վաղուց անհետացած տարեշրջանների վրա:

Այդ հայեացքը շատ կարևոր է երկու տեսակէտից: Նախ և առաջ, միայն այդ լուրջ փորձնական տեսակէտից նայելով, այսինքն իրաւունքը ընկերական յարաբերութիւնների օրգանական արգիւնքը համարելով, կարող ենք վճռել ու բարոյական խնդիրները, որոնք սերտ կերպով կապւած են իրաւունքի հետ: Բարոյականութիւնը նոյնպէս ճիշտ համապատասխանում է իւրաքանչիւր տարեշրջանի քաղաքակրթական յարաբերութիւններին, նա նոյնպէս մի ընտանի արգիւնք է, որ ենթարկւած է աստիճանական զարգացման, ոչ թէ երկնքից վայր ընկած մի յայտնութիւն է: Այս պատճառով մեր անխուսափելի պարտաւորութիւնն է, որ դեռ կարողանանք ճիշտ ըմբռնել երկարատև ճանապարհի առանձին շրջանները, նախ քան թոյլ տանք մեզ դատողութիւն անել բարբոս ժողովուրդների մասին և դատապարտել

«վայրենիների» կոպիտ բարքուվարքը: Բարոյական խորշանք արտայայտելը շատ հեշտ բան է, իսկ երեւոյթների հիմնական պատճառների հոգեբանական ըմբռնումը այնքան էլ հեշտ չէ, ու շատ անգամ մենք, արհամարելով յետ մնացած ժողովուրդների բարքուվարքը, միայն մեր բանիմացութեան աններելի տկարութիւնն ենք ցոյց ապիս: Երկրորդ օգուտը, որ մենք կարող ենք ստանալ լուրջ զիտական հետազօտութիւնից, մեր ընտրած նիւթի անմիջական հետեանքն է. ինչպէս մի կողմից մենք հեռու ենք կանգնում վերացական իրաւագիտութեան անապացոյց եզրակացութիւններից, նոյնպէս միւս կողմից՝ պիտի զգուշանանք այն, ոչ-պակաս երեակայական, ենթադրութիւններից, որ անում է ծայրայեղ արմատականութիւնն ու անիշխանութիւնը առանց փաստերի վրա հիմնելու: Այստեղ նոյնպէս տիրապետում է նոյն բնահաճութիւնը. անհատականութեան չափազանց բարձր, հետևապէս սխալ, գնահատութիւնն է այստեղ դեր խաղում: Առանց կենսական փորձերը զիտելու, ընդունում են, իբր թէ անհատականութեան միջոցով կարելի է աշխարհը հիմնովին կերպարանափոխել: Հասարակական կազմակերպութիւնից բոլորովին անկախ անհատի բարեկարգիչ գօրութիւնը մի կատարեալ ցնորք է, որը իրականութեան մէջ երբէք չենք տեսնում: Ուստի լրագրական, մակերեւոյթային այն քաղաքագէտները, որոնք մարդկային ցեղի փրկութիւն

նը միմիայն ձայների մեծամասնութիւնից են սպասում, վատ չէին անիլ, եթէ փոքր ինչ աւելի ճիշտ կերպով ուսումնասիրէին իրաւունքի ու բարոյականութեան ծագումը ու զարգացումը, հիմնւելով ազգագրական նիւթերի վրա, որպէս զի վաղորօք զգուշանային շտապովի միջոցներից և այդպիսով ազատ մնային զգալի յուսախաբութիւնից:



Կ. Ե. Ր. Զ.



«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Մ Բ

Թիֆլիսում 6 ո., Թիֆլիսից դուրս ճանապարհա-
ծախսով 7 ո.

Կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ—կանխավճար Թիֆ-
լիսում—1 ո., Թիֆլիսից դուրս 2 ո., մնացածը
ամեն հատոր ստանալիս Մէկ-Մէկ ուրբի, վեր-
ջին 6-րդ հատորը—ձրի:

Հոյս տեսնելուց յետոյ վեցհատորեակը
կարժենայ 9 ո.:

Բաժանորդ գրել կարելի է Թիֆլիսում «Կենտ-
րոնական» և «Գուտտենբերգ» գրախանութներում
և «Հեմէա» տպարանում, Բագու «Сотрудникъ»
գրախանութում:

Ուրիշ քաղաքներից դիմել ընկերութեանս

Ժ ո գ ո վ ռ դ ա կ ա ն գ Ր Բ Ո Յ Կ Ն Ե Ր

1. Գեմիրչեան. Կ. Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. պատմաճըներ 7 կ.
2. Վերեաւել Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Պ. Պուշեան 6 կ.
3. Շխեանց Ս. Մի մահ և Անտուակը. պատմաճըներ 7 կ.
4. Էրկման-Շասրեանից ժամագործի յիշողութիւնները, թարգմ. Շուշ. Սաժակնեան 8 կ.
5. Պրոֆ. Վ. Զովբարս. Ինչո՞ւ այժմ ամեն մարդ հետաքրքրուում է քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով թարգ. Ս. Թառայեան 10 կ.
6. Յ. Գառլիէ. Կապիտալ և Կապիտալիստ թարգ. Ս. Թառայեան 12 կ.

ՀԷՖԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիա

1. Ղազ. Աղայեանի. Գիւլնազ-տատի հէքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Սան 15 կ.
2. Ղազ. Աղայեանի. Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Բալա. 15 կ.

Կազմած երկուսը միասին 45 կ.

Հ Ա Յ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն Ե Ր

1. Յովհան. Թումանեանի Սասունցի Դաւիթը 15 կ.
2. » Անուշ 15 »
3. » Լեզենդներ 15 »
4. [Redacted] Երգեր. 15 »
5. » Լեռան աղջիկը 15 »

Օր. Հեղինէ Մելիք-Հայկազեանի Մի պտոյտ ճապոնում. իմ յուշերից և տպաւորութիւններից, 25 պատկերով 40 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество «Ст. Лисицианъ и Ко». (Бебутовская ул. 25) և Типография «Гермесъ» (Мадатовская ул. 15).

« Ազգային գրադարան »



NL0206085

32. 871

